Սարգիս Մ. Մկրտչեան
«Հրայր Մարուխեան» հիմնադրամ
dr.smkrtchian@gmail.com
ORCID: 0009-0002-6378-1679

ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Թաթար այլախոհ Սաբիրզեան Բադրետդինի ուշագրաւ դատողութիւնների լոյսի ներքոյ

:

Ամփոփում

Սոյն յօդուածը նպատակ ունի վերհանելու յետխորհրդային երկրներում պանթիւրքիզմի գաղափարախօսութեան ու քաղաքական շարժման ծաւալման արդի միտումները՝ նրա ինքնատիպ ներկայացուցիչներից մէկի՝ Սաբիրզեան Բադրետդինի (Sabirzyan Badretdin, Sabirjan Badretdinov) հրապարակումների ուսումնասիրութեան միջոցով:

Նրա հրապարակումները բացայայտում են 21-րդ դարում յետխորհրդային երկրներում տարածուող պանթիւրքական գաղափարների տեսական հիմնաւորումներն ու նոր մօտեցումներով հին նպատակներին հասնելու քողարկուած մարտավարութիւնները: «Ազատութիւն» ռադիոկայանում երկար տարիներ Սաբիրզեան Բադրետդինի զբաղեցրած պաշտօնը նրան լայն հնարաւորութիւններ է ընձեռել պանթիւրքական գաղափարների տարածման համար:

Ներկայ հրապարակումը Սաբիրզեան Բադրետդինի գաղափարների ամբողջական ուսումնասիրութեան փորձ է, որի հիմքը մամուլում հրատարակուած նրա մի քանի այլ յօդուածներն են:

Բանալի բառեր – պանթիւրքիզմ, թիւրքական աշխարհ, Իրան, Ադրբեջան, Կենտրոնական Ասիա, «Թլպատման սկզբունք», դաշնութիւն, Սաբիրզեան Բադրետդին (Սաբիրզեան Բադրետինով)

Sarkis M. Mkrtchian

MODERN TRENDS IN THE DEVELOPMENT OF THE IDEOLOGY OF PAN-TURKISM

in Light of The Noteworthy Judgments of the
Tatar Dissident Sabirzyan Badretdin

Summary

This article aims to reveal the current trends in the development of the ideology and political movement of Pan-Turkism in post-Soviet countries through the study of the publications of one of its original representatives, Sabirzyan Badretdin (Sabirjan Badretdinov).

His publications reveal the theoretical foundations of the pan-Turkic ideas spreading in the post-Soviet countries in the 21st century and the hidden tactics of achieving old goals with new approaches. The position held by Sabirzian Badretdin at Radio Liberty for many years provided him with ample opportunities for the dissemination of pan-Turkic ideas.

The present publication is an attempt to comprehensively study Sabirzian Badretdin's ideas, for which several of his other articles published in the press served as a basis.

Key words - Pan-Turkism, Turkic world, Iran, Azerbaijan, Central Asia, "Principle of circumcision", federation, Sabirzyan Badretdin (Sabirjan Badretdinov)

Саркис М. Мкртчян

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ИДЕОЛОГИИ ПАНТЮРКИЗМА

В свете примечательных суждений татарского диссидента Сабирзьяна Бадретдина

Аннотация

Настоящая статья направлена на выявление современных тенденций распространения идеологии и политического движения пантюркизма в постсоветских странах на основе анализа публикаций одного из его уникальных представителей - Сабирьяна Бадретдина (Сабирзьян Бадретдинова).

Его публикации раскрывают теоретические обоснования пантюркистских идей, распространяемых в постсоветском пространстве в XXI веке, а также завуалированные стратегии достижения прежних целей с использованием новых подходов. Должность, которую Сабирзьян Бадретдина в течение многих лет занимал на радиостанции «Свобода», предоставила ему широкие возможности для распространения пантюркистских идей.

Настоящая публикация представляет собой попытку комплексного исследования идей Сабирзьяна Бадретдин, основанного на анализе статей, опубликованных в зарубежной и российской печати.

Ключевые слова: пантюркизм, тюркский мир, Иран, Азербайджан, Центральная Азия, «принцип обрезания», федерация, Сабирьзн Бадретдин (Сабирзьян Бадретдинов).

Մուտք

Սաբիրզեան Բադրետդինը ազգութեամբ թաթար պատմաբան ու հրապարակախօս է, ով ծնուել է եւ մեծացել է Ռուսաստանի Կազան քաղաքում (http://tatar.yuldash.com/076.html): Տեղի համալսարանում ուսանել է պատմութիւն, սակայն 1985 թուականին որոշել է փախչել Խորհրդային Միութիւնից (http://tatar.yuldash.com /078.html): Ստացել է զբօսաշրջութեան նպատակով արտասահման մեկնելու թոյլտուութիւն եւ Խորհրդային Միութիւնից խմբով մեկնել է Յորդանան եւ Սիրիա: Յորդանանում լքել է խումբը եւ դիմել ԱՄՆ դեսպանութիւն՝ խնդրելով քաղաքական ապաստան: Այնուհետեւ աշխատանքի է անցել «Ազատութիւն» ռադիոկայանի թաթար-բաշկիր ծառայութեան բաժնում, դարձել այդ ծառայութեան աւագ խմբագիրը եւ երկար տարիներ աշխատել է Նիւ Եորքում եւ Միւնխէնում: Եղել է նաեւ «Թուրքեստանի լրատու» (Turkistan Newsletter) առցանց հրատարակութեան խմբագրական խորհրդի անդամ: Մեր կողմից վերլուծութեան ենթարկուած նրա յօդուածները գլխաւորաբար հրատարակուել են «Թաթար գազետ» (The Tatar Gazette) թերթում, որը Ռուսաստանի Դաշնութեան Մորդովիայի Հանրապետութեան թաթարական համայնքի մշակութային եւ կրթական թերթն է:

Սաբիրզեան Բադրետդինը կարծում է, որ. «Պանթիւրքիզմի վերաբերեալ բոլորի կողմից ընդունելի սահմանում գոյութիւն չունի: Ընդհանուր առմամբ պանթիւրքիզմը գաղափարական, քաղաքական եւ որոշ չափով մշակութային շարժում է, որի նպատակն է հասնել աշխարհի թիւրքալեզու ժողովրդների աւելի մեծ միասնութեան աստիճանի՝ հաւանաբար նպատակակէտ ունենալով հաստատել թիւրքական պետութիւնների համադաշնութիւն (Confederation) կամ նոյնիսկ թիւրքական դաշնութիւն (Federation)» (Sabirzyan Badretdin, “Pan-turkism: Past, Present and Future”, The Tatar Gazette, 18 April 2000, no. 3-4, at http://tatar.yuldash. com/eng_ 099.html.):

Ըստ նրա՝ Խորհրդային Միութեան փլուզումը 1991 թուականին պայմաններ ստեղծեց պանթիւրքական շարժման վերակենդանացման համար: Թուրքիան այլեւս միակ անկախ թիւրքական պետութիւնը չէր. Ուզբեկստանը, Ադրբեջանը, Թուրքմէնստանը, Ղրղզստանը եւ Ղազախստանը դարձան 1992 թուականի հոկտեմբերի 30-ին Անկարայում կայացած Թիւրքական պետութիւնների առաջին գագաթնաժողովի մասնակիցները, որն ազդարարեց նրանց քաղաքական ու տնտեսական միասնութեանը հասնելու ձգտումների մասին:

Բայց ստեղծուած կացութեան մեջ Սաբիրզեան Բադրետդինը գիտակցում էր, որ պանթիւրքիզմի շահերը բախուելու են Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի, Բուլղարիայի, Յունաստանի եւ Աֆղանստանի շահերին (հետաքրքիր է, որ չի նշել Հայաստանը): Հետեւաբար այդ երկրների կողմից հակադարձութիւնները կանխելու նպատակով նա առաջարկում էր որդեգրել դանդաղ եւ զգուշաւոր գործելակերպ, որ նա անուանում էր «Թլպատման սկզբունք» (“Principle of circumcision”): «Թլպատման ընթացքում երեխայի ուշադրութիւնը շեղելու նպատակով նրան զբաղեցնում են խաղալիքներով եւ քաղցրաւենիքներով: Երբ անխուսափելին տեղի է ունենում, լացելու կամ դիմադրելու համար արդէն բաւականին ուշ է լինում: Այս տրամաբանութեամբ խորհրդատրելի է, որ թիւրքական ազգերը շարժման առաջին հանգրուանում շեշտը առաւելաբար դնեն թիւրքերի միջեւ մշակութային, ընկերային եւ տնտեսական կապերի վրայ: Քաղաքական նպատակները կարող են յետաձգուել մինչեւ շարժման միւս հանգրուանը, երբ տնտեսական եւ մշակութային համարկումն արդէն կայացել է: Երկրորդ հանգրուանի ընթացքում, քաղաքական ամրակայումը պիտի դառնայ առաջնահերթութիւն, բայց պիտի սահմանափակուի թիւրքական վեց անկախ պետութիւններով: Երբ թիւրքական վեց անկախ պետութիւնների քաղաքական ամրակայման որոշակի աստիճան ձեռք բերուի, թիւրքական ժողովուրդները, որոնք տակաւին մնացել են գաղութատիրութեան ճնշման ներքոյ, պիտի դառնան ուշադրութեան կենտրոն՝ գերագոյն նպատակ ունենալով թիւրքական բոլոր ժողովուրդների ազատագրումն ու նրանց քաղաքական միաւորումը: Սա ընդգրկում է Ռուսաստանի (թաթարներ, բաշկիրներ, եակուտներ եւ այլն), Չինաստանի (ույղուրներ), Իրանի (ադրբեջանցիներ)[1] եւ այլ երկրների թիւրքական փոքրամասնութիւններին» (Badretdin, 2000):

1. Թուրքիայի դերի վերագնահատման անհրաժեշտութիւնը

Սաբիրզեան Բադրետդինի ընկալմամբ՝ նոր իրողութիւնների պայմաններում պանթիւրքիզմի քաղաքականութեան մէկ այլ կարեւոր երեսը Թուրքիայի դերի վերագնահատման խնդիրն է: Նրա կարծիքով՝ Թուրքիայի ծաւալապաշտութիւնը Արեւմուտքի եւ Ռուսաստանի կողմից միշտ էլ կասկածով է դիտուել: Հետեւաբար, համաթիւրքական համարկման

[1] Խօսքը Իրանի թիւրքախօսների մասին է:

նախնական փուլում նպատակայարմար է քաղաքական տեսակէտից չշեշտել Թուրքիայի առաջնորդող դերը՝ փոխարէնը շեշտելով Թուրքիայի առաջնորդութեան մշակութային երեսը (Badretdin, 2000):

Վերջապէս նա կարեւոր է համարում փոխել աշխարհում առկայ պանթիւրքիզմի մասին պատկերացումը, քանզի կարիք չկայ անտեսելու նրա նկատմամբ թշնամական վերաբերմունքի պատճառները: Սաբիրզեան Բադրետդինի կարծիքով գաղութատիրական ճնշումից թիւրքական ժողովուրդների ազատագրութեան խնդիրը եւ մշակութային, քաղաքական ու տնտեսական միաւորումը ազնիւ նպատակներ են, որ իւրաքանչիւր բարոյական մարդ պէտք է պաշտպանի: Նման հարցադրմամբ նա միտումնաւոր կերրպով մէկ փաթեթի մէջ է ընդգրկում երկու տարբեր խնդիրներ՝ **ազատագրումը** եւ **վերամիաւորումը**: Անշուշտ, թիւրքական երկրները նոյնպէս ունեն ինքնորոշման իրաւունք, սակայն **ինքնորոշումն ու անկախ պետականութեան ձեւաւորումը չի ենթադրում միաւորում մի նոր անդրազգային կազմակերպութեան մէջ, որի հիմքում դրուած է սոսկ լեզուական ընդհանրութեան սկզբունքը**: Իսկ այդտեղ առկայ թիւրք եւ թուրք հասկացութիւնների միտումնաւոր նոյնականացումը որպէս պանթիւրքիզմի ելակէտային գաղափար-սկզբունք՝ վաղուց բացայայտուել է հայ արեւելագիտութեան ու պատմագիտութեան կողմից (Գ.Խ., 2009, 118):

Սաբիրզեան Բադրետդինը միակը չէ, ով կարծում է որ պանթիւրքիզմը մօտ ապագայում պիտի կենտրոնանայ լեզուի, մշակոյթի եւ մարդու իրաւունքների վրայ (Գ.Խ., 2009, 118): Բայց ուշագրաւ է այն իրողութիւնը, որ վերջին տասնամեակներում պանթիւրքիզմի քաղաքականութիւնը լիովին տեղաւորւում է նրա ներկայացրած նման ճկուն ռազմավարութեան շրջանակներում:

Այսպէս՝ 1992 թ. Թուրքիայի նախաձեռնած Թիւրքական պետութիւնների գագաթնաժողովից յետոյ՝ 2009 թ. հոկտեմբերի 3-ին կեանքի կոչուեց Թիւրքալեզու պետութիւնների համագործակցութեան խորհուրդը (Թիւրքական խորհուրդ), որին անդամակցեցին Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը եւ Թուրքիան: Կազմակերպութիւնը տնտեսական, դատաիրաւական, կրթամշակութային, գիտական եւ այլ ոլորտների համար մշակեց ծրագրեր: Իսկ 2021 թուականի նոեմբերի 12-ին Ստամբուլում կայացած հերթական գագաթնաժողովի ժամանակ Թիւրքական խորհուրդը վերանուանուեց «Թիւրքական պետութիւնների կազմակերպութեան»:

Մինչ այդ՝ 2012 թ. մայիսի 12-13-ին, Անկարայում տեղի ունեցաւ կազմակերպիչների բնորոշմամբ՝ Իրանի ազերիների առաջին խորհրդաժողովը, որին մասնակցում էին Իրանից, Ադրբեջանի Հանրապետութիւնից, Թուրքիայից, Իրաքից եւ այլ երկրներից խորհրդարանի պատգամաւորներ կամ գործադիր մարմինների նախկին պաշտօնեաներ: Երկօրեայ նիստերի աւարտին կեանքի է կոչուել, այսպէս ասած, «Հարաւային Ադրբեջանի թուրքերի ազգային խորհուրդը» (International South Azerbaijani Turks' National Council), որի խօսնակը յայտարարել է, որ իրենց վերջնանպատակը Հարաւային Ադրբեջանի անկախութիւնն է: Նշենք, որ Հարաւային Ադրբեջան ասելիս հեղինակները նկատի ունեն Իրանի թիւրքախօս շրջանները՝ այսօրուայ վարչատարածքային բաժանմամբ հիմնականում Արեւելեան Ատրպատականը, Արեւմտեան Ատրպատականը, Արդեբիլը եւ Զանջան նահանգները:

Յետագայ տարիներին այս հրապարակային քայլերին աւելացել են բազմաթիւ այլ միջոցառումներ: Մասնաւորապէս. «Հիւսիսային եւ Հարաւային Ադրբեջանների» 7 կազմակերպութիւններ վերջերս յայտարարել են, որ «Հիւսիսային Ադրբեջանի մայրաքաղաքում՝ Բաքւում, հիմնադրուել է «Հարաւային Ադրբեջանի համադրման կենտրոն» (https://milliqurtulus.com/fa/مرکز-هماهنگی-آزربایجان-جنوبی-در-باک/):

Այս լրատուութեան ճշգրիտ թուականը նշուած չէ, բայց ենթադրաբար դա եղել է 2026-ի սկզբներին:

«Միջազգային թիւրքական ակադեմիայի» նախագահ Շահին Մուստաֆաեւը առաջին թիւրքագիտական համագումարի 100-ամեակի կապակցութեամբ 2026 թուականի փետրուարի 26-28-ին Բաքւում տեղի ունեցած նիստի բացման խօսքում, յայտնել է, որ. «Առաջին թիւրքագիտական համագումարը յաջողութեամբ իրականացրեց թիւրքական ժողովուրդների լատինական այբուբենի անցնելու պատմական խնդիրը» (https:// turkicacademy.org/en/novost-akademii/prof-dr-shahin-mustafayev-first-turkology-congress-successfully-accomplished-historic-task-transitioning-turkic-peoples-latin-alphabet): Նա աւելացրել է, որ «Հպարտութեամբ եմ նշում, որ 2023 թուականին «Միջազգային թիւրքական ակադեմիայի» եւ «Թիւրքական պետութիւնների կազմակերպութեան» նախաձեռնութեամբ ստեղծուեց Միասնական թիւրքական այբուբենի միջպետական յանձնաժողովը: Ակադեմիան այս գործընթացի ընթացքում սերտօրէն համագործակցել է լեզուի ինստիտուտների, Թուրքական լեզուի ասոցիացիայի եւ առաջատար լեզուաբանների հետ: Ի վերջոյ 2024 թուականի սեպտեմբերի 11-ին Բաքւում կայացած յանձնաժողովի երրորդ նիստում ընդունուեց լատի-

նական գրի վրայ հիմնուած եւ 34 տառից բաղկացած Միասնական թիւրքական այբուբեն: Այսպիսով, «Միջազգային թիւրքական ակադեմիան» եւ նրա գործընկեր հաստատութիւնները, գոնէ մասամբ, կատարել են 1926 թուականի կոնգրեսի մասնակիցների եւ այն մեծ մտաւորականների յիշատակի առջեւ իրենց պարտականութիւնը» (https://turkicaca demy.org /en/novost-akademii/prof-dr-shahin-mustafayev-first-turkology-congress-successfully-accomplished-historic-task-transitioning-turkic-peoples-latin-alphabet (դիտուել է՝ 12.03.2026)):

Այսպիսով՝ անցած տասնամեակներին պանթիւրքիստների ձեռնարկած վերոյիշեալ քաղաքական, գիտական եւ մշակութային գործողութիւնները լիովին տեղաւորուել են Սաբիրզեան Բադրետդինի առաջադրած ռազմավարութեան շրջագծում: Այսինքն՝ դանդաղօրէն յաղթահարելով պանթիւրքիզմի քաղաքականութեան առջեւ առկայ տարբեր արգելքներն ու պատնէշները՝ նրանք մօտեցրել են առաջադրուած նպատակի իրականացումը:

2. Թիւրքոֆոբիայի յաղթահարման խնդիրը

Պանթիւրքիզմի քաղաքականութեան առջեւ առկայ տարբեր արգելքներն ու պատնէշները յաղթահարելու կամ շրջանցելու առաջադրանքի համատեքստում Սաբիրզեան Բադրետդինը կարեւորում է նաեւ թուրքոֆոբիայի (թրքատեացութեան) դանդաղ յաղթահարելը: Իր մէկ այլ յօդուածում «Թիւրքոֆոբիա՝ հասարակական եւ պատմական արմատները» (https://tatargazeta. tripod.com/082.html (դիտուել է՝ 20.03.2026)) նա գրում է, որ թիւրքոֆոբիայի արմատները դարերի խորք են հասնում: Աշխարհում որեւէ ազգ կամ էթնիկ խումբ չկայ, որ խտրականութեան ենթարկուած չլինի եւ թիւրքական ժողովուրդներն էլ բացառութիւն չեն: Նա դրա համար հինգ պատճառ է բերում՝ պատմական իրադարձութիւնները, կրօնական նախապաշարմունքը, թիւրքական տարածքների աշխարհագրական դիրքը, կառավարութիւնների կողմից հովանաւորուող քարոզչութիւնը եւ ժամանակակից ժողովրդական մշակոյթի կարծրատիպերը:

Պատմական իրադարձութիւնների պարագային որպէս օրինակ Սաբիրզեան Բադրետդինը նշում է թաթար-մոնղոլական ներխուժումը ռուսական տարածքներ, ռուս-թուրքական պատերազմները եւ այլն:

Անդրադառնալով կրօնական նախապաշարմունքի պարագային՝ նա նկատում է, որ քանի որ թիւրքախօս ազգերի մեծ մասը իսլամադա-

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

ւան է, ուստի իսլամական ֆունդամենտալիստական անհանդուրժողականութեան եւ բռնութեան բոլոր բացասական կարծրատիպերը անխուսափելիօրէն տարածւում են թիւրքախօս ժողովուրդների վրայ, չնայած այն հանգամանքին, որ թիւրքերի մեծ մասն իրականում կա՛մ աշխարհիկ է, կա՛ մ էլ հետեւում է իսլամի խաղաղ եւ անվնաս մեկնաբանութիւններին: Եւրամիութեան կողմից Թուրքիայի անդամակցութիւնը մերժելը Սաբիրզեան Բադրետդինը նման նախապաշարմունքի վառ օրինակ է համարում (Badretdin, 2000):

Նման իրողութիւնը նա բացատրում է Ս. Հանթինգտոնի «Քաղաքակրթութիւնների բախման» տեսութեամբ, ըստ որի՝ միջազգային հակամարտութիւնները, ամենայն հաւանականութեամբ, կը ծագեն ընդհանուր սահմաններ ունեցող, բայց տարբեր կրօնական քաղաքակրթութիւնների պատկանող ազգերի միջեւ: Աշխարհում կայ ութ քաղաքակրթութիւն եւ դրանց մէջ իսլամը միակն է, որը կիսում է իր «սահմանները» միւս քաղաքակրթութիւնների մեծ մասի հետ: Թիւրքական հողերի մեծ մասը գտնւում է քաղաքակրթութիւնների այսպէս կոչուած «բեկման գծերի» վրայ (Badretdin, 2000): Այստեղ ակնհայտ է դառնում հեղինակի պանթիւրքական մտասեւեռումը, քանզի յայտնի է, որ «թիւրքական հողեր» պայմանական հասկացութիւնը որեւէ կապ չունի նման «բեկման գծերի» հետ, որոնք իրականում եղել են նախքան թիւրքական քոչուոր ցեղերի աւելի ուշ շրջանի տեղաշարժերը:

Ի վերջոյ Սաբիրզեան Բադրետդինը խօսում է նաեւ կառավարութիւնների կողմից հովանաւորուող քարոզչութեան մասին այն պետութիւնների ներսում, որոնք կա՛մ սահմանակից են թիւրքական երկրներին, կա՛մ իրենց տարածքներում ունեն թիւրքական փոքրամասնութիւններ: Որպէս առաջին իրողութեան վկայութիւն նա նշում է 1978 թ. արտադրուած «Կէսգիշերային ճեպընթաց» ֆիլմը, իսկ ժողովրդական բանահիւսութեան կապակցութեամբ վկայաբերում է ռուսական ասացուածքը թաթարների մասին՝ «անկոչ հիւրը թաթարից վատն է» (Badretdin, 2000): Այս առումով՝ Սաբիրզեան Բադրետդինը մոռանում է վկայաբերել բալկանեան ժողովուրդների՝ թուրքերի մասին աւելի քան խօսուն արտայայտութիւնները, չխօսելով արդէն հայ ժողովրդական բանահիւսութեան մէջ արմատաւորուած՝ «մարդ ե՞ս, թե՞ թուրք» երկընտրանքի մասին:

Վերջապէս նա գրում է, որ «Երբ հայ ահաբեկիչը սպանում է թուրք դիւանագէտի եւ արդարացնում իր յանցանքը իր ծնուելուց եօթ տասնամեակ առաջ տեղի ունեցածով, նա ակամայ բացայայտում է թիւրքոֆո-

բիայի հիմքը կազմող պատմական, քաղաքական, սոցիալական եւ հոգեբանական գործօնների բարդ փոխազդեցութիւնը» (Badretdin, 2000):

Սաբիրզեան Բադրետդինն ունի պանթիւրքական հայեացքներ, ուստի մոռանալով նշել Հայոց Ցեղասպանութիւնը, Իրանի դէմ Օսմանեան կայսրութեան պատերազմները, քրդերին ճնշելու թուրքական քաղաքականութիւնը եւ բազմաթիւ այլ օրինակներ՝ փորձում է քողարկել պանթիւրքիզմի քաղաքականութեան հանդէպ տարբեր ժողովուրդների ու երկրների շատ բնական հակազդեցութեան պատճառները: Անգամ կրօնական նախապաշարմունքը պատճառ համարելիս նա չի նկատում, թէ ինչպէ՞ս են բազմաթիւ քրիստոնեայ եւ իսլամադաւան ժողովուրդներ ապրում կողք կողքի՝ առանց իրար ատելու եւ ինչու՞ է յատկապէս Օսմանեան կայսրութեան (յետոյ արդէն Թուրքիայի Հանրապետութեան) եւ արհեստածին Ադրբեջանի Հանրապետութեան պարագայում առաջանում նման թշնամանքը:

Աւելին՝ յայտնի իրողութիւն է, որ արդէն «Թանզիմաթի» երկրորդ փուլում՝ 19-րդ դարի 50-ական թթ.. կէսերից մինչեւ 70-ական թթ.. ժամանակաշրջանում, անգամ բարեփոխական շարժման առաջնորդները՝ Մեհմեդ Էմին Ալի փաշան եւ Մեհմեդ Ֆուադ փաշան ձեւակերպեցին Օսմանեան կայսրութեան բոլոր բնակիչների «միախառնման ու միաձուլման» հայեցակարգը՝ այն դարձնելով իրենց քաղաքականութեան հիմնական նպատակը (Սաֆրաստյան, 2009, 54): Այս կապակցութեամբ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստեանը նկատում է. «Գնահատելով Ալի փաշայի եւ Ֆուադ փաշայի լայնօրէն պրոպագանդուող «միաձուլումը»՝ գալիս ենք եզրակացութեան, որ այն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ քրիստոնեայ ժողովուրդների «խաղաղ» ապազգայնացման եւ ուծացման փորձ եւ դրանով իսկ Օսմանեան կայսրութիւնում ազգային հարցի լուծում (Սաֆրաստյան, 2009, 54):

Հարց է առաջանում՝ ինչու՞ են դժգոհում Սաբիրզեան Բադրետդինը եւ միւս պանթիւրքական գաղափարխօսները ռուսական կամ իրանական այսպէս ասած «միաձուլման» քաղաքականութիւնից, երբ դեռեւս 19-րդ դարի կէսերին Օսմանեան կայսրութեան ղեկավարութիւնն էր նման քաղաքականութիւն որդեգրել, որի իրականացման ճանապարհին նա որեւէ բանի առաջ կանգ չի առել:

Թիւրքոֆոբիայի մասին խօսելով՝ Սաբիրզեան Բադրետդինը մոռանում է Հայոց ցեղասպանութիւնը եւ Արեւմտահայաստանի բռնագրաւումը: Նա չի խօսում այն մասին, թէ ինչպէս են այդ ամենի հեղինակները Միջին Ասիայից յայտնուել Հայկական բարձրաւանդակում եւ ուրիշների հայրենիքը բռնազաւթելով եւ դրա համար մեղքը տեղաբնիկների վրայ

գցելով՝ խեղաթիւրում պատմութիւնը եւ փախչում պատասխանատուութիւնից: Այդ օրինակներին պիտի աւելացնել 2020 թուականին Արցախի դէմ Ադրբեջանի եւ Թուրքիայի սանձազերծած պատերազմը, 2023 թուականին Արցախի բռնազաւթումն ու արցախահայերի տեղահանութիւնը, այնուհետ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքից որոշ շրջանների բռնագրաւումը:

Նոյնը՝ 1974 թուականի յուլիսի 20-ին Թուրքիայի՝ Կիպրոս ներխուժելու եւ Կիպրոսի հիւսիսային շրջանները գրաւելու ու «Հիւսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետութեան ստեղծման պարագայում: Օրինակների այս շարքը կարելի է շարունակել անվերջ:

Մինչդեռ անտեսելով այդ ամէնը՝ Սաբիրզեան Բադրեդտինը իր մէկ այլ «Թիւրքական աշխարհի ապագան» յօդուածում (https:// tatar gazeta.tripod.com/085.html (դիտուել է՝ 20.03.2026)) փորձում է մի քանի տասնամեակների կտրուածքով կանխատեսել թիւրքական աշխարհի տնտեսական համարկման (ինտեգրման) հեռանկարները: Նրա կարծիքով՝ կասպեան շրջանի նաւթի եւ գազի գների բարձրացումը խոր ազդեցութիւն է ունենալու այդ ժողովուրդների վրայ. Ադրբեջանը, Ղազախստանը, Թուրքմէնստանը եւ որոշ չափով Թաթարստանն ու Բաշկորտոստանը, հաւանաբար, կընտրեն մէկ ապրանքի զարգացման ուղի (Badretdin, 2000): Նրա կարծիքով՝ կասպիական նաւթի եւ գազի «բումը», հաւանաբար, կստեղծի նոր հասարակական դաս՝ կոմպրադորական բուրժուազիա, որոնք կապուած են միջազգային (հիմնականում արեւմտեան) նաւթային ընկերութիւնների հետ: Սաբիրզեան Բադրեդտինը կանխատեսում է նաեւ, որ ամերիկեան ընկերութիւնների ներգրաւուածութիւնը Ադրբեջանում, Ղազախստանում եւ Թուրքմէնստանում կստեղծի «թիւրքամէտ» խմբակցութիւն ԱՄՆ Կոնգրեսում: Սա թիւրքական երկրներին կը տայ հզօր դաշնակից՝ միջազգային յարաբերութիւններում (Badretdin, 2000):

Դրան հակառակ, նրա կարծիքով՝ Արեւմտեան Եւրոպան հաւանաբար կը շարունակի Թուրքիային դուրս մղել Եւրամիութիւնից՝ մուսուլմանների նկատմամբ իր «կողմնակալութեան» պատճառով: Դրանով Սաբիրզեան Բադրեդտինը երկարաժամկէտ առումով կանխատեսում է ամերիկա-թիւրքական կայուն դաշինք՝ եւրոպա-թուրքական կապերի հաշուին: Բայց նրա կարծիքով՝ Յունաստանի հետ լարուածութիւնը, քրդական խնդիրը եւ քեմալիզմի ժառանգութիւնը ամենայն հաւանականութեամբ կը խանգարեն Թուրքիային դառնալու թիւրքական աշխարհի անվիճելի առաջնորդը (Badretdin, 2000): Ուստի Թուրքիայի առաջնորդութեան բացակայութիւնը մրցակցութիւն կառաջացնի **Ղազախստանի** եւ **Ուզբեկս**-

տանի միջեւ՝ այդ բացը լրացնելու համար գոնէ Կենտրոնական Ասիայում: Այս կանխատեսումն արժանի է լուրջ ուշադրութեան, քանզի համապատասխանում է միջազգային քաղաքականութեան արդի միտումներին: Բայց այդ դէպքում բաց է մնում Թուրքիայի յետագայ ճակատագրի հարցը:

Սակայն Սաբիրզեան Բադրետդինը, շրջանցելով իր իսկ կողմից առաջադրուած միանգամայն ճիշտ կանխատեսումը, համարում է, որ «-Թուրքիայի դերակատարութեան թուլացումը ոչ միայն չի յանգեցնի Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, այլեւ գրեթէ անխուսափելի կը դարձնի թիւրքական նոր պետութիւնների ձեւաւորումը: Նրա կարծիքով՝ Թաթարստանը, Բաշկորկոստանը եւ Եակուտիան հաւանաբար անկախ կը դառնան մէկ տասնամեակի ընթացքում: Միայն Արեւելեան Թուրքեստանը, որը գերուած է Չինաստանի կողմից, հաւանաբար կը մնայ մեկուսացուած թիւրքական աշխարհի մնացած մասից: Իսկ Ադրբեջանի նաւթային «բումը» կը բարձրացնի այդ հանրապետութեան կենսամակարդակը այնքան բարձր մակարդակի, որ Իրանում գտնուող ազերիների աղքատ եղբայրները կարող են աւելի ու աւելի դժգոհ լինել աճող անհաւասարութիւնից եւ պահանջել միաւորուել Ադրբեջանի հետ» (Badretdin, 2000):

Իրանի թիւրքախօսների պարագայում Սաբիրզեան Բադրետդինը հարցը դիտարկում է զուտ տնտեսական տեսանկիւնից: Ադրբեջանի նաւթային «բումի» մասին նրա դատողութիւնները չեն համապատասխանում անգամ վերջին տասնամեակում Ադրբեջանի նաւթային պաշարների մասին այդ երկրի պաշտօնական վիճակագրութեանը, որը դանդաղ, բայց կայուն անկում է արձանագրում: Աւելին՝ մեր մի քանի յօդուածներով (Մկրտչեան, 2020, 251) եւ մենագրութեամբ (Մկրտչեան, 2019, 184) արդէն ապացուցել ենք, որ այստեղ հարցը շատ աւելի խորն է, քան զուտ տնտեսական գործօնը: Նշենք, որ 2025 թ. յունիսի 13-ին սկսուած եւ 12 օր տեւած Իրանի դէմ Իսրայէլի եւ ԱՄՆ-ի սանձազերծած պատերազմը ու մանաւանդ՝ Հորմուզի նեղուցի շուրջ վերջին իրադարձութիւնները առարկայօրէն ցոյց տուեցին հայրենիքը պաշտպանելու հարցում իրանցիների միասնականութեան եւ համերաշխութեան փաստը:

Ամփոփելով՝ Սաբիրզեան Բադրետդինը եզրակացնում է, որ առաջիկայում թիւրքական համարկումը (ինտեգրացիա) ընդհանուր առմամբ կարող է որոշ երկրների մօտ (Յունաստան, Հայաստան, Չինաստան, Իրան, Աֆղանստան, Ռուսաստան) սպառնալիքի զգացում առաջացնել եւ մղել դաշինքների՝ միմեանց հետ: Նրանք կը փորձեն կանխել թիւրքական աշխարհի յետագայ համարկումը (Badretdin, 2000):

Յօդուածի վերջում Բադրետդինն առաջարկում է.

1. Թիւրքական երկրներում ստեղծել իսլամական համալսարաններ-ի ցանց, որտեղ աստուածաբանութեան ուսանողները կարող են կրօն սովորել՝ առանց իսլամական ֆունդամենտալիզմի գաղափարներով ներշնչուելու:

2. Ձեռնարկել միջոցառումներ, որոնք կապահովեն թիւրքական երկրների տնտեսական համակարգերի զանազանակերպութիւնը (դիվերսիֆիկացիա) եւ կը նուազեցնեն նրանց բացառապէս նաւթից կախուածութիւնը:

3. Ստեղծել միջազգային կոմիտէ՝ Կենտրոնական Ասիայի երկրների ներկայիս սահմանները սահմանազատելու նպատակով՝ ապագայ հակամարտութիւնները կանխելու համար (Badretdin, 2000):

Եզրակացութիւններ

19-րդ դարում ձեւաւորուած պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնը շարունակում է գոյութիւն ունենալ 21-րդ դարի արդէն երկրորդ քառորդում: Այն երբեմն բացայայտ, իսկ յաճախ՝ մշակութային, բարեգործական, տնտեսական եւ այլ անուանումներով քողարկուած, առաջ է տանում իր ծրագրերը: Սաբիրզեան Բադրետդինը, թէկուզեւ գիտական աշխարհին ոչ այնքան յայտնի անձ է, բայց այդ գաղափարախօսութեան վառ ներկայացուցիչներից է: Նրա գրութիւններում, ինչպէս բնորոշ է պանթիւրքական այլ գաղափարախօսներին, յստակօրէն եւ ընդգծուած կերպով դրսեւորւում են թիւրքական աշխարհի միաւորման գաղափարները: Այդ համատեքստում շարունակւում է պատմութեան խեղաթիւրումը, անջատողականութեան ու ծաւալապաշտութեան քարոզը, Իրանի նկատմամբ հակակրանքը, ռուսատեացութիւնը եւ այն: Իսկ Սաբիրզեան Բադրետդինի առաջարկած «Թլպատման սկզբունք»-ը (“Principle of circumcision”) գործնական յստակ ուղեցոյց է պանթիւրքական գաղափարների հանգրուանային իրագործման համար:

Սարգիս Մ. Մկրտչեան – գիտական հետաքրքրութիւններն ընդգրկում են պանթիւրքիզմի՝ Իրան ներթափանցելու փորձերի եւ Իրանի Ատրպատականում պանթիւրքական կազմակերպութիւնների գործունէութեան պատմութիւնը եւ արդի միտումները: Այս թեմայով հրատարակել է մէկ աշխատութիւն և բազմաթիւ գիտական յօդուածներ:

Օգտագործուած գրականութիւն

1. **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ..), Երեւան, 2009
2. **Մկրտչեան Սարգիս**, Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում, Երևան, 2019թ. (երկրորդ հրատարակութիւն)
3. **Գ. Խ.** (Գևորգ Խուդինյան), Թյուրքերը, թուրքերը և մենք: «Թյուրքական աշխարհ, Կովկաս և Իրան – քաղաքակրթական փոխգործակցության խաչմերուկ» միջազգային գիտաժողովի մասին, «Վէմ» համահայկական հանդես, 2009, N 2, էջ 118–124
4. **Մկրտչեան Սարգիս**, Իրանի ազերիների ինքնութեան հարցի շուրջ, «Վէմ» համահայկական հանդէս, ԺԲ (ԺԸ) տարի, թիւ 2 (70), ապրիլ-յունիս 2020, Երեւան
5. https://www.droshak.am/?p=206 (դիտուել է՝ 10.03.2026)
6. https://akunq.net/blog/2013/02/04/պանթիւրքիզմ-անցեալը-ներկան-ապագան/ (դիտուել է՝ 10.03.2026)
7. http://tatar.yuldash.com/076.html (դիտուել է՝ 17.03.2026)
8. http://tatar.yuldash.com/078.html (դիտուել է՝ 17.03.2026)
9. Sabirzyan Badretdin, “Pan-turkism: Past, Present and Future”, The Tatar Gazette, 18 April 2000, no. 3-4, at http://tatar.yuldash.com/eng_099.html. (դիտուել է՝ 15.01.2013)
10. https://milliqurtulus.com/fa/مرکز-هماهنگی-آذربایجان-جنوبی-در-باک/ (դիտուել է՝ 17.03.2026)
11. https://turkicacademy.org/en/novost-akademii/prof-dr-shahin-mustafayev-first-turkology-congress-successfully-accomplished-historic-task-transitioning-turkic-peoples-latin-alphabet (դիտուել է՝ 12.03.2026)
12. https://tatargazeta.tripod.com/082.html (դիտուել է՝ 20.03.2026)
13. https://tatargazeta.tripod.com/085.html (դիտուել է՝ 20.03.2026)

Bibliography (Latin Script)

1. **Safrastyan R.,** Osmanyan kaysrutyun. Tseghaspanutyan dzragri dzagumnabanutyune (1876-1920 tt.), Yerevan, 2009 **(In Armenian)**
2. **Mkrtchian Sarkis**, Pantyurkakan hosanknere jamanakakits Iranum, Yerevan, 2019 t. (yerkrord hratarakutyun) **(In Armenian)**
3. **G. Kh.** (Gevorg Khoudinyan), Tyurkere, turkere yev menk: “Tyurkakan ashkharh, Kovkas yev Iran – kaghakakrtakan pokhgordzaktsutyan khachmeruk”, mijazgayin gitajoghovi masin, “Vem” hamahaykakan jandes, 2009, N 2, ej 118-124 **(In Armenian)**
4. **Mkrtchian Sarkis**, Irani azerineri inknutyan hartsi shurj, “Vem” hamahaykakan hands, Zh B (Zh U) tari, tiv 2 (70), april-hunis 2020, Yerevan **(In Armenian)**
5. https://www.droshak.am/?p=206 (10.03.2026)
6. https://akunq.net/blog/2013/02/04/panturkism-antsyale-nerkan-apagan/ (10.03.2026)

7. http://tatar.yuldash.com/076.html (17.03.2026)
8. http://tatar.yuldash.com/078.html (17.03.2026)
9. Sabirzyan Badretdin, “Pan-turkism: Past, Present and Future”, The Tatar Gazette, 18 April 2000, no. 3-4, at http://tatar.yuldash.com/eng_099.html. (15.01.2013)
10. https://milliqurtulus.com/fa/markaz-hamahangi-azernaijan- jonubi-dar-bak/ (17.03.2026)
11. https://turkicacademy.org/en/novost-akademii/prof-dr-shahin-mustafayev-first-turkology-congress-successfully-accomplished-historic-task-transitioning-turkic-peoples-latin-alphabet (12.03.2026)
12. https://tatargazeta.tripod.com/082.html (20.03.2026)
13. https://tatargazeta.tripod.com/085.html (20.03.2026)